Աղքատություն և պարենային անապահովություն. փոխկապակցվածության պատկերը

Մարտ 2023

WFP
World Food Programme

SAVING LIVES
CHANGING LIVES

WFP
wfp.org

vam
food security analysis

Ամփոփագիր

Պարենային ապահովության և խոցելիության գնահատումները (ՊԱԽԳ) միտված են հետևելու Հայաստանում պարենային ապահովության իրավիճակին: Դրանք նախաձեռնվել են Քովիդ-19 համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակների պայմաններում:

Պարենային ապահովության և խոցելիության չորրորդ գնահատումը (ՊԱԽԳ 4) իրականացվել է Հայաստանի բոլոր մարզերում 2022թ. մայիսից հունիս ընկած ժամանակահատվածում: Հետազոտության շրջանակներում նաև իրականացվել է Հայաստանում աղքատության մակարդակի գնահատում՝ հիմնված տնային տնտեսությունների ամսական պարենային և ոչ պարենային ծախսերի վրա: Հետազոտության ընդհանուր նպատակն էր պարզել Հայաստանում աղքատության և պարենային անապահովության փոխկապակցվածությունը: Գնահատվել է նաև Կառավարության «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման ուղղված նպաստներ» (ԸԿԲՈՒՆ) ծրագրում[1] պարենային անապահով տնային տնտեսությունների հնարավոր բացառումը և, միևնույն ժամանակ, պարենային ապահով ընտանիքների ներառումը: Գնահատումն իրականացվել է դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով՝ 4,196 տնային տնտեսությունների շրջանում, որոնցից 1,300 տնային տնտեսություն Հայաստանի բոլոր մարզերից պատահականորեն ընտրված ԸԿԲՈՒՆ ծրագրի շահառուներ են (այսուհետ՝ նպաստառու): Ընտրանքի չափը և աշխարհագրությունը ներկայացուցչական են եղել և՛ ազգային, և՛ տարածաշրջանային մակարդակներում[2]:

Գործազրկության և անաշխատունակության բարձր մակարդակները, գնաճի բարձր տեմպերի, արժույթի փոխարժեքի տատանումների և այլ գործոնների հետ զուգորդված, արդեն իսկ բացասաբար են ազդում Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի վրա, քանի որ «կենսապահովման» ճգնաժամը նվազեցնում է տնային տնտեսությունների եկամուտներն ու ընդհանուր բարեկեցությունը՝ սահմանափակելով նրանց սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունները, ներառյալ այնպիսի ծառայություններ, որոնք երեխաներին և այլ խոցելի խմբերին հնարավորություն են տալիս վարել արժանապատիվ կյանք՝ սոցիալապես պաշտպանված միջավայրում: Այս իրավիճակում սոցիալական ոլորտները ենթարկվում են լրացուցիչ ճնշումների՝ վտանգելով տնտեսական աճը:

Հայաստանում երկար ժամանակ սոցիալական պաշտպանության ծրագրերն իրականացվել են ցնցումների պատճառով առաջացող կարիքներին արձագանքելու նպատակով, սակայն սոցիալական աջակցության գումարների չափերը չեն համապատասխանեցվել փոփոխվող իրավիճակին: Ավելին, ներկայումս Հայաստանում սոցիալական և ընտանեկան նպաստներն ուղղված են աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության բարեկեցության ապահովմանը, սակայն թիրախային բնակչության պարենային ապահովության մակարդակը հաշվի չի առնվում՝ ազգային պարենային ապահովության հասկացության սահմանման, սոցիալական պաշտպանության ռազմավարության մեջ, ինչպես նաև շահառուների թիրախավորման չափանիշների մեջ:

Այսպիսով, ՊԱԽԳ4-ը միտված էր գնահատելու պարենային անապահովության և աղքատության մակարդակը Հայաստանում՝ նպաստառու և ոչ նպաստառու տնային տնտեսությունների շրջանում, ինչպես նաև բացահայտել շահառուների ներառման/բացառման պայմանները՝

[1] Այս հետազոտության մեջ ներառում է ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը

[2] Ընդհանուր 4,196 հարցազրույցներ տնային տնտեսությունների հետ, ազգային և տարածաշրջանային ներկայացուցչական, պատահական ընտրանքի վրա հիմնված (95 տոկոս վստահության միջակայք, 2 և 5 տոկոս սխալանքի սահման համապատասխանաբար ազգային և տարածաշրջանային պատահական, ներկայացուցչական ընտրանքների համար):

պարենային ապահովության տեսանկյունից: Պարզելով, թե որքանով են պարենային անապահով տնային տնտեսությունները ներառված (կամ բացառված) սոցիալական և ընտանեկան նպաստների համակարգում, հնարավոր կլինի հանդես գալ առաջարկություններով քաղաքականության մշակման համար, մասնավորապես մատնանշելով, թե ինչպես ներառել պարենային անապահովության հիմնահարցը:

ՊԱԽԳ 4-ի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում տնային տնտեսությունների 23 տոկոսը պարենային անապահով են եղել՝ 2021 թվականի ապրիլի համեմատ աճելով 2 տոկոսային կետով: Նպաստառու տնային տնտեսությունների շրջանում նկատվել է պարենային անապահովության ավելի բարձր մակարդակ (42 տոկոս)՝ ոչ նպաստառու տնային տնտեսությունների համեմատ (15 տոկոս): Նպաստառու տնային տնտեսությունների մոտ 65 տոկոսը հայտնել է, որ նպաստը ծախսել է իրենց սննդի կարիքները հոգալու համար, իսկ նրանց կեսից ավելին պարտքեր ուներ: Ավելին, նրանց 72 տոկոսը պարտք է վերցնում սնունդ գնելու նպատակով կամ խանութներից ապառիկով սնունդ է գնում: Հետազոտությունը ցույց է տալիս, որ նպաստառուների մեջ շատ ավելի մեծ է այն մարդկանց թիվը, ովքեր տնային տնտեսություններում բավարար սնունդ ունենալու և իրենց հասանելի ռեսուրսների բացը լրացնելու համար հաղթահարման ռազմավարություններ են կիրառում: Մի կարևոր դիտարկում ևս՝ նպաստառուների զգալի մասը, որոնք դասակարգվել են որպես պարենային անապահով, ավելի քան 7 տարի ներառված են եղել ընտանեկան նպաստների համակարգում:

Համաձայն ՊԱԽԳ4-ի արդյունքների՝ 2022 թվականին Հայաստանում աղքատության մակարդակն աճել է: Պարենային/ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 9 տոկոս, ինչը 7 տոկոսային կետով ավելի է, քան 2021 թվականի ՀՀ Վիճակագրական կոմիտեի (Արմստատի) կողմից հրապարակված ծայրահեղ աղքատության ցուցանիշը[3]: Աղքատության միջին մակարդակը կազմել է 32 տոկոս՝ 2021 թվականի համեմատ աճելով 5 տոկոսային կետով: Նպաստառու տնային տնտեսությունների շուրջ 20 տոկոսը եղել են ծայրահեղ աղքատներ՝ 4 տոկոսով ավել ոչ նպաստառուների համեմատ: Նմանապես, աղքատ տնային տնտեսությունների շատ բարձր տոկոս է նկատվել նպաստառուների շրջանում (60 տոկոս)՝ ոչ նպաստառուների հետ համեմատած (17 տոկոս): Հաշվի առնելով, որ ԸԿԲՈՒՆ թիրախավորումը հիմնականում հիմնված է աղքատության չափորոշիչների վրա, այս բացահայտումը ցույց է տալիս, որ աջակցության կարիք ունեցող տնային տնտեսությունների թիրախավորման համար օգտագործվող մեթոդը գործուն է: Օգնության տևողության և աղքատության համադրումը ցույց է տալիս, որ ավելի քան 7 տարի օգնություն ստացողների շրջանում աղքատ տնային տնտեսությունների կշիռը զգալիորեն ավելի մեծ է: Սա կարող է ահազանգել շահառու տնային տնտեսությունների սոցիալական օգնությունից կախվածության բարձր մակարդակի և երկար տարիների օգնությունից հետո նրանց ինքնաբավության մակարդակի նվազման մասին:

Պարենային խնդիրների հաղթահարման ռազմավարությունները ավելի հաճախ են կիրառվում նպաստառուների կողմից (28 տոկոս)՝ ոչ նպաստառուների համեմատ (10 տոկոս): Նպաստառուների մոտ կեսը հայտնել է, որ իրականացրել է ճգնաժամային հաղթահարման ռազմավարություն, ինչը նշանակում է, որ նրանք կրճատել են առողջապահական և կրթական ոչ պարենային ծախսերը, դիմել են հարևանների և/կամ հարազատների օգնությանը և/կամ վաճառել են արտադրական ակտիվներ (հող, անասուն և այլն) կամ տրանսպորտային միջոցներ (ցանքատար մեքենա, ձեռնասայլակ, ավտոմեքենա և այլն):

[3] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021, Արմստատ՝ https://armstat.am/am/?nid=82&id=2438

Ինչպես արդեն նշվել է, հետազոտությունը նաև գնահատել է ԸԿԲՈՒՆ ծրագրում պարենային առումով ապահով բնակչության ներառումը և պարենային անապահով բնակչության բացառումը: Օգտագործելով ՊԱԽԳ4 տվյալները՝ գնահատվել է, թե պարենային անապահով քանի՞ տնային տնտեսություն է իրականում ներառված եղել ԸԿԲՈՒՆ ծրագրերում, ինչպես նաև հաշվարկվել է բոլոր այն պարենային անապահով տնային տնտեսությունների քանակը, որոնք իրավասու են եղել ընդգրկվել ԸԿԲՈՒՆ ծրագրերում՝ ըստ գործող թիրախավորման չափորոշիչների):

Պարենային ապահովության առումով բացառման (չընդգրկման) սխալանքը կազմել է 43 տոկոս, ինչը նշանակում է, որ նույնիսկ լինելով պարենային անապահով՝ մարդկանց մի մասը ԸԿԲՈՒՆ աջակցություն չի ստացել՝ ծրագրի աղքատության սահմանմանը չհամապատասխանելու պատճառով: Ընդհանուր առմամբ, ԸԿԲՈՒՆ-ը չի ներառում երկրում պարենային անապահով տաս մարդուց չորսին: Սա կարևոր խումբ է, որն անխոս պետք է դիտարկել պարենային ապահովությանը միտված ծրագրերի համար:

Միևնույն ժամանակ, ԸԿԲՈՒՆ-ի նպաստառու տնային տնտեսությունների 30 տոկոսը դասակարգվել է որպես պարենային ապահով և ոչ աղքատ, իսկ ոչ նպաստառու տնային տնտեսությունների մոտ 6 տոկոսը գնահատվել են որպես և՛ պարենային անապահով, և՛ աղքատ:

Վերլուծությունը ցույց է տվել որոշակի փոխկապակցվածություն պարենային անապահովության և աղքատության միջև՝ 42 տոկոս համընկման մակարդակով: Հայտնաբերվել է նաև կորելացիա աղքատության և պարենային ապահովության ցուցանիշների այնպիսի բաղադրիչների միջև, ինչպիսիք են սննդի սպառման միավորը, ինչպես նաև պարենային անապահովության հաղթահարման ռազմավարությունները:

Աղքատ և պարենային անապահով տնային տնտեսությունների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը շատ նման են՝ ամբողջացնելով խոցելի տնային տնտեսությունների պատկերը: Պարենային ապահովության և աղքատության առումով ամենախոցելի տնային տնտեսություններն են եղել կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները, չորս և ավելի երեխա ունեցողները, միայնակ տարեցների, ամուսնալուծված կամ այրիացած անձի գլխավորությամբ տնային տնտեսությունները, ինչպես նաև հաշմանդամ չափահաս ընտանիքի անդամ կամ երեխա ունեցող տնային տնտեսությունները:

ՊԱԽԳ4-ի բացահայտումների հիման վրա արվել են հետևյալ հիմնական առաջարկությունները՝

Առաջարկություն 1՝ Պարենային ապահովության ցուցանիշների ներառումը ԸԿԲՈՒՆ-ում տնային տնտեսությունների խոցելիության չափման մեջ:

Խորհուրդ է տրվում ԸԿԲՈՒՆ-ի թիրախավորման մեխանիզմներում ներառել պարենային ապահովության չափորոշիչները: Չնայած աղքատությունն ու պարենային ապահովությունը փոխկապակցված են՝ ծայրահեղ աղքատությունը պարտադիր չէ, որ համադրվի պարենային անապահովություն հետ և հակառակը: Սա նշանակում է, որ ԸԿԲՈՒՆ-ը, որն ուղղված է միայն ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններին, լիարժեքորեն չի հակազդում սովի և թերսնուցման խնդիրներին, որոնք սովորաբար երկարաժամկետ ազդեցություն են ունենում տնային տնտեսությունների և պետության սոցիալ-տնտեսական հնարավորությունների վրա:

Առաջարկություն 2՝ Սահմանել պարենային ապահովության համար վաղ ազդարարման համակարգ:

Ազգային կառավարման համակարգը բոլոր ոլորտներում ենթադրում է վաղ ազդարարում և գործողությունների իրականացման համապարփակ մոտեցում՝ ապացուցահենք և տեղեկացված գործողություններ իրականացնելու նպատակով: Հետևաբար, վաղ ազդարարման այնպիսի

համակարգը, ինչպիսին է պարենային ապահովության վերահսկումը, կարող է հիմք հանդիսանալ ցնցումներին արագ և պատշաճ արձագանքող սոցիալական պաշտպանության ազգային համակարգի համար: Պարենային ապահովության վերահսկման առաջարկվող համակարգը պատրաստվածություն և վաղ գործողությունների պլանավորման հնարավորություն է ապահովում և այդպիսով նպաստում է տնտեսության ավտոմատ կայունացմանը:

Առաջարկություն 3՝ Նախագծել և իրականացնել պարենային օգնություն՝ խոցելի բնակչության պարենային կարիքներին համապատասխան:

Առաջարկվում է նախագծել և իրականացնել պարենային աջակցության ծրագրեր, որոնք հատուկ կթիրախավորեն այն տնային տնտեսությունները, որոնք սննդի կարիք ունեն ինչպե՛ս նպաստառուների, այնպե՛ս էլ ոչ նպաստառուների շրջանում: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն այժմ փորձնական կերպով իրականացնում է սննդի քարտերի նախագիծը՝ համագործակցելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միասնական սոցիալական ծառայության հետ, որը թիրախավորում է նպաստառուների և ոչ նպաստառուների շրջանում այն խոցելի տնային տնտեսություններին, որոնք նաև սննդի կարիք ունեն: Սա կարող է Կառավարության համար սոցիալական աջակցության լավ գործիք հանդիսանալ՝ դառնալով և՛ սոցիալական պաշտպանության ազգային համակարգերի մաս, և՛ ցնցումներին արագ արձագանքման գործիք:

Առաջարկություն 4՝ Ստեղծել ցնցումներին արագ արձագանքող պարենային ապահովության ցանցային համակարգեր:

Խորհուրդ է տրվում նախագծել պարենային ապահովության այնպիսի համակարգ (որպես համապարփակ փաթեթ), որը կներառի ա) սնուցման ուսուցում և իրազեկում, ինչպես նաև իրազեկում առողջ սննդի ընտրության և գնումների վերաբերյալ, բ) ռիսկերի կառավարում, գ) կկիրառի ցնցումներին դիմակայունության բարձրացմանն ուղղված սոցիալական վարքագծի փոփոխության մոտեցումներ, դ) մարդկանց կիրազեկի դժվարությունների հաղթահարման մեխանիզմների ազդեցության մասին՝ իրազեկ ընտրություն կատարելու համար, ե) կհանդիսանա տնտեսական խթան և ցնցումներին վաղ և արագ արձագանքման մեխանիզմ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակ

Հասցե՝ Պետրոս Ադամյան 14, Երևան, 0010, Հայաստան

Էլ. փոստ՝ wfp.yerevan@wfp.org